ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Հանրային «Առաջին ալիք» հեռուստաընկերության եթերում հեռարձակված երաժշտական բովանդակության վերաբերյալ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Խորհրդին է վերահասցեագրել քաղաքացի Պավլուշ Ավդալյանի 26.11.2025թ. դիմում-բողոքը՝ «Առաջին ալիքի» եթերում հեռարձակված երաժշտական բովանդակության վերաբերյալ:

Բողոքում նշված է հետևյալը.
Հեռարձակված երգի բառերը պարունակում էին բացահայտ սեռական ենթատեքստ, ինչը, իմ կարծիքով, անհամապատասխան է Հանրային հեռուստատեսության հանրային մանդատին և այն ժամանակահատվածին, երբ հեռարձակումը կարող էր դիտվել անչափահասների կողմից:
Մասնավորապես, երգում առկա էին հետևյալ տողերը՝
"Like sugar on my tongue, tongue, tongue… Your body is so sweet, sweet, sweet…
Invite me if you come, come, come… It's all I want to eat, eat, eat…"
Վերոնշյալ տողերը իրենց ենթատեքստով պարունակում են սեռական բնույթի նշաններ:

Հանրային հեռարձակողի խորհուրդը բողոքի վերաբերյալ պարզաբանում է ստացել Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանից:

«2 Աստղ - 2» հեռուստահաղորդման առաջին թողարկման ընթացքում հնչել է «Shugar on my tongue» անվանումով երաժշտական ստեղծագործությունը՝ ներկայացված Ժակ և Լյուսի զույգի կատարմամբ...

- *Տողերի բառացի բովանդակության մեջ բացահայտ սեռական արտահայտություններ չեն պարունակվում:*
- *Երգի տեքստի ենթատեքստային մեկնաբանությունները բազմազան են, և ինչպես ցույց է տալիս բաց ինտերնետային աղբյուրների վերլուծությունը, ստեղծագործությունն արձանագրվում է նաև որպես բովանդակություն, որը կենտրոնացած է զգայականության, էներգետիկ շարժման և պարային տրամադրության վրա, այլ ոչ թե պարտադիր սեռական ակնարկներով հագեցած նյութ:*
- *Միջազգային երաժշտական քննադատություններում և առցանց մեկնաբանություններում ստեղծագործությունը դիտարկվում է որպես բազմաշերտ պատկերավորում, որը լսարանի կողմից ընկալվում է տարբեր ձևերով՝ ըստ անհատական ընկալումների և մշակութային միջավայրի:*

Հեռուստաընկերության կողմից տվյալ փաստը չի անտեսվել, և նախքան ստեղծագործության վերջնական ընտրությունը և դրա հեռարձակումը պատշաճ կերպով ուսումնասիրել է ստեղծագործության բովանդակությունը՝ համոզվելու համար, որ այն չի հակասում գործող օրենսդրությանը:

Հանրային հեռարձակողի խորհուրդը 2025 թ. դեկտեմբերի 9-ին քննության է առել քաղաքացի Պավլուշ Ավդալյանի դիմումը, հեռուստաընկերության տնօրենի պարզաբանումը, ստուգել է փաստերը և չի հայտնաբերել ՀՀ օրենքների և կիրառելի էթիկական կանոնագրի որևէ խախտում: